



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀՀ ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

 Վ. ՄԻՆԱՍՅԱՆ

«11» 10 2016թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 83

Ձեռնարկողը՝


<<Հայնախագիծ>> ԲԲԸ
Քաղաք Երևան, Չարենցի 1

Գործունեությունը՝

**Վանաձոր քաղաքի թիվ 7 հիմնական դպրոցի
վերակառուցման շրջակա միջավայրի վրա
ազդեցության նախնական գնահատման հայտ**
ՀՀ Լոռու մարզ

**<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն>>
տնօրեն՝**




Վ. Սահակյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ Վ3
«11» 10 2016թ.

***«Հայնախագիծ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված ՀՀ Լոռու մարզի Վանաձորի
թիվ 7 հիմնական դպրոցի վերակառուցման նախնական գնահատման հայտ***

Պատվիրատու՝	«Հայնախագիծ» ԲԲԸ
Ներկայացված նյութեր՝	Նախնական գնահատման հայտ և կից փաստաթղթեր
Տեղադրման վայրը՝	ՀՀ Լոռու մարզ
Գործունեության կատեգորիան՝	«Գ»

Վանաձորի Ա. Բակունցի անվան թիվ 7 դպրոցի կառուցումն իրականացվելու է Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակներում (ԴՄԱԲԾ) Ասիական Զարգացման Բանկի աջակցությամբ արդյունքների վրա հիմնված վարկավորման (ԱՀՎ) մոդելի կիրառմամբ:

Ծրագիրը համահունչ է ՀՀ կառավարության <<Աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության>> նպատակներին և ուղղված է երկրի սեյսմակայունության ապահովմանը, անհատական և հասարակական անվտանգության մակարդակի բարձրացմանը, և երկրի կայուն զարգացմանը:

Վանաձորի թիվ 7 դպրոցի կառուցումը նախատեսված է իրականացնել Նարեկացի 13 հասցեում: Դպրոցի տարածքը գտնվում է երկու հարթությունների վրա: Դպրոցի շենքի ճարտարապետական լուծումը համապատասխանում է տարածքի ռելիեֆին, համաձայն որի մարզահրապարակները և մարզադահլիճը նախատեսվում է կառուցել վերևի հարթությունում, իսկ ներքևի հարթությունում՝ դասասենյակներ, լսարաններ, լաբորատոր սենյակներ և այլ կոմունալ կենցաղային սենյակներ:

Դպրոցի ընդհանուր կառուցապատման մակերեսը կազմում է 2528.5քմ, իսկ ընդհանուր հողատարածքի մակերեսը՝ 7300քմ: Համաձայն նախնական գնահատման հայտի դպրոցը բաղկացած է լինելու սեյսմիկ կոնստրուկտիվ կարերով միացված 3 մասնաշենքերից, որոնցից յուրաքանչյուրը կունենա 535.5քմ, 1580քմ և 413քմ մակերեսներ: Մասնաշենքերից երկուսում նախատեսում է կառուցել թվով 26 դասասենյակ, աշխատասենյակ և լաբորատոր սենյակներ, ինչպես նաև մեկական ճաշասենյակ և հանդիսության սրահներ, իսկ երրորդ մասնաշենքը

կծառայի որպես մարգագահլիճ, որտեղ նախատեսվում է կառուցել 2 հանդերձարաններ՝ լողասենյակներով և սանհանգույցներով:

Ուսումնական մասնաշենքերը բաղկացած կլինեն 2 վերգետնյա հարկերից, որոնք կունենան համապատասխանաբար 3մ բարձրություն, իսկ երրորդ մասնաշենքը՝ մարգագահլիճը, միահարկ կառույց է և կունենա 10.5մ ընդհանուր բարձրություն:

Դպրոցի համալիրը կունենա 2 սպորտային գոտիներ՝ համապատասխանաբար 460.8քմ և 252քմ մակերեսով և 25քմ ընդհանուր մակերեսով կաթսայատուն: Տարածքի կանաչապատման և ասֆալտապատման գոտիների մակերեսները համապատասխանաբար կկազմեն 1689,7քմ և 1950 քմ:

Մասնաշենքերի տանիքը նախատեսվում է կառուցել լանջավոր՝ փայտյա ծպեղային համակարգով, որը կունենա նաև կազմակերպված ներքին ջրահեռացում:

Դպրոցի ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել Գ. Նարեկացու անվան փողոցով անցնող 500մմ տրամագիծ ունեցող քաղաքային ջրազծից: Ջրահեռացումը իրականացվելու է 300մմ տրամագծով խողովակով, որը կմիացվի Թևոսյան փողոցով անցնող 600մմ տրամագիծ ունեցող քաղաքային կոյուղազծին:

Դպրոցի ջեռուցումը նախատեսվում է իրականացնել կաթսայատան միջոցով: Կաթսայատան շահագործումը կիրականացվի ջրային երկու կաթսաների միջոցով բնական գազի այրմամբ՝ 8000 կկալ/մ³ ջերմությամբ, իսկ որպես պահուստային վառելիք կօգտագործվի հեղուկ վառելիք՝ 10000 կկալ/մ³ ջերմությամբ: Բնական գազի և հեղուկ վառելիքի առավելագույն ծախսը գնահատվում է համապատասխանաբար 18մ³/ժ (ընդհանուր 36մ³/ժ) և 14 կգ/մ³(ընդհանուր 28 կգ/մ³):

Վառելիքի այրման ընթացքում առաջացած ծխազազերի հեռացումը կկատարվի 300մմ տրամագծով և 12մ բարձրությամբ ծխնելույզի միջոցով:

Կաթսայատան ջուրն օգտագործվելու է միայն ջրաջեռուցիչ կաթսայի և ջերմային ցանցերի միանվագ լցման համար, որը հետագայում կլրասնուցվի համակարգում ջրային կորուստների առաջացման դեպքում: Արտադրական հոսքաջրերի առաջացումը բացառվում է:

Համաձայն արտանետումների հաշվարկման արդյունքների կաթսայատան շահագործման ընթացքում մթնոլորտային օդ արտանետված վնասակար գազերի գետնամերձ քանակները գտնվում են սահմանված թույլատրելի նորմերի սահմաններում,:

Դպրոցում նախատեսված են ընդհանուր օդափոխության ներածման և արտածման համակարգեր, ինչպես արհեստական եղանակով այնպես և բնական ճանապարհով: Մեխանիկական ներածման և արտածման օդափոխությունը նախատեսված է միջանցքների, բուֆետի, մարգագահլիճի և հանդիսությունների դահլիճների համար: Մեխանիկական արտածում է նախատեսված նաև քիմիայի դասասենյակի քարշիչ պահարանի համար:

Բնական արտածումը նախատեսված է իրականացնել դասարանների և աշխատասենյակների համար: Արտածվող օդը կկոմպենսացվի միջանցք տրվող տաքացվող օդով, իսկ պատերի մեջ տեղադրված օդի հաղորդային ճաղաշարերի միջոցով կտրվի նաև դասասենյակներին:

Նախագծված օդափոխության սխեման թույլ է տալիս տնտեսել ջերմության ծախսը: Օդափոխիչներից աղմուկի տարածումը բացառվում է՝ օդափոխանակիչից հետո նախատեսված աղմկախլացուցիչի կիրառմամբ:

Շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է կատարել հետևյալ ծավալներով հողային աշխատանքները՝ շինհրապարակի մաքրում հողատարածքում առկա կենցաղային աղբից ընդհանուր հանույթը՝ 1550մ³, դպրոցի շենքի փոստրակի մշակում՝ ընդհանուր հանույթը՝ 4358մ³, տեղափոխվող հանույթ՝ 2668մ³, ետլիցք՝ 1690մ³, կաթսայատան շենքի փոստրակի մշակում՝ ընդհանուր հանույթը՝ 87մ³, տեղափոխվող հանույթ՝ 51մ³, ետլիցք՝ 36մ³:

Բուսահողը նախատեսվում է տեղափոխել և պահել մոտ 7կմ հեռավորության վրա Վանաձորի քաղաքապետարանի կողմից նախատեսված տարածքում, իսկ ետլիցքի համար նախատեսված հանույթը նախատեսվում է թափոնակույտեր շինհրապարակում և հետագայում օգտագործել բարեկարգման և հողային աշխատանքներում:

Պահանջվող էլեկտրաէներգիայի մատակարարումը կիրականացվի 0,4կՎտ օդային մալուխային գծից («Դեբետ» մասնաճյուղի հաշվեկշռում գտնվող թիվ 9010 բաշխիչ կայան)՝ 400ԿՎտ հզորությամբ շարժական էլեկտրական խցիկի (ՈՒԿՏՈՒ ԲՔ մակնիշի) տեղադրմամբ:

Շինմեխանիզմների համար անհրաժեշտ վառելիքի քանակը ապահովվելու է շինարարական հիմնարկի պահեստից, իսկ խտացրած օդը նախատեսվում է մատակարարել շարժական կայաններից (ՋԻՖ-55 մակնիշի):

Ներկայացված նախնական գնահատման հայտով շինարարական աշխատանքների ընթացքում ծառահատումներ նախատեսված չեն:

Նախատեսվող գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա կանխատեսվող ազդեցությունը ներկայացվում է երկու՝ շինարարության և շահագործման փուլերով:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջանալու է օդային ավազանի աղտոտվածություն՝ անօրգանական փոշու ժամանակավոր արտանետումներ, ինչպես նաև դիզելային շարժիչով աշխատող մեքենաների արտանետումներ: Համաձայն ներկայացված հաշվարկների արտանետվող վնասակար նյութերի քանակները սահմանային թույլատրելի նորմերի սահմաններում են:

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ աշխատանքների համար, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով:

Շինարարությունից հետո նախատեսվում է իրականացնել նոր թփուտների տնկում՝ դպրոցի կանաչապատման պլանին համապատասխան: Բուսականության խնամքի համար նախագծով նախատեսվում է ռոռզման ջրագծի կառուցում, իսկ հետագա իրականացվելու է դպրոցի տնօրինության կողմից:

Հետշինարարական փուլում հնարավոր բնապահպանական ազդեցությունները կարող են առաջանալ ջեռուցման շրջանում կաթսայատան շահագործման ընթացքում, սակայն համաձայն արտանետվող վտանգավոր նյութերի քանակների հաշվարկի, վնասակար նյութերի քանակները սահմանային թույլատրելի նորմերի սահմաններում են:

Եզրահանգում

Ներկայացված նախնական գնահատման հայտով նախատեսված աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են ազդեցության նվազեցմանն ուղղված բավարար միջոցառումներ՝ մթնոլորտային օդի, հողային ռեսուրսների, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության վերաբերյալ:

Նախատեսվող գործունեության հիմնական ազդեցությունը պայմանավորված է շինարարության փուլով, ինչը չունի զգալի ազդեցություն և կրում է ժամանակավոր բնույթ:

Այսպիսով իրականացվող աշխատանքների ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:

Փորձաքննական պահանջ

- Շինարարության ընթացքում առաջացած շինադիր, կենցաղային աղբը, անհրաժեշտ է հեռացնել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«Հայնախագիծ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված ՀՀ Լոռու մարզի Վանաձորի թիվ 7 հիմնական դպրոցի վերակառուցման նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝

Ձ. Զուռնաչյան